ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«22» սեպտեմբերի 2025 թ. N 147-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 51-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի N Ե/767-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի ապրիլի 11-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 51-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

9/22/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի ապրիլի 22-ի N 147-Ա հրամանի

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի ապրիլի 11-ի N 51-Ա հրամանի

## «Որակի տեխնիկական հսկումը շինարարությունում, մաս 1»

## միջոցառման ժամանակացույց

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Մայիսի 7-20 | 18.30 | «Որակի տեխնիկական հսկումը շինարարությունում, մաս 1» | ՃՇՀԱՀ Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 | 24 կրեդիտ | I, II, III կարգի մասնագետներ, 05,06,13,14,17,18, 21,22,25,26 մասնագիտություններ | 96000 ՀՀ դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղույան | *<u>վերապատրաստման դասընթաց</u>* | | | |
| 2 | Սեպտեմբերի 23-հոկտեմբերի 14 | 18.30 | «Որակի տեխնիկական հսկումը շինարարությունում, մաս 1» | ՃՇՀԱՀ Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղույան | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 *<u>վերապատրաստման դասընթաց</u>* | 24 կրեդիտ | I, II, III կարգի մասնագետներ, 05,06,13,14,17,18, 21,22,25,26 մասնագիտություններ | 96000 ՀՀ դրամ |